**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին**

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/09» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2023 թվականի ապրիլի 27-ին կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/09-1» պայմանագրում 2023 թվականի մայիսի 30-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Վաճառողի առաջարկությամբ ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգվել է:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի «ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ում «Ժամկետը» սյունակում նշված «30 օրացուցային օր» բառերը փոխարինվել են «60 օրացուցային օր» բառերով:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 8.5 և 8.8 կետեր:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**
**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ**
**27.04.2023թ. N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/09-1» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ**
**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան «30» մայիսի 2023թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և Ֆոտոն ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն. Պետրոսյանի (այսուհետ՝ Վաճառող), որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 27.04.2023թ. կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/09-1» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.8 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Պայմանագրի «ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ում «Ժամկետը» սյունակում նշված «30 օրացուցային օր» բառերը փոխարինել «60 օրացուցային օր» բառերով:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ***Դատական դեպարտամենտ*** | ***Ֆոտոն ՍՊԸ*** |
| Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1 | Հասցե՝ ք. Երևան, Ռոստոմի 58 |
| ՀՎՀՀ՝ 02583241 | ՀՎՀՀ՝ 90036001 |
| Հ/Հ՝ 900011005841 | Հ/Հ՝ 2470073444240000 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Արդշինբանկ» ՓԲԸ |
| Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ն. Գալստյան | Տնօրեն՝ Ն. Պետրոսյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ. | Կ.Տ. |